ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԻՄ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ մարտի 7-ի N 281-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N100-Ա հրամանը

որոշում եմ՝

1. Ստեղծել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմ (այսուհետ՝ ԱՌՆ մարզային թիմ):
2. Հաստատել ԱՌՆ մարզային թիմի կազմը՝ ի պաշտոնե սկզբունքով, համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել ԱՌՆ մարզային թիմի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Լիազորել աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմին.
   1) ապահովել նպաստավոր միջավայր աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրներով զբաղվող բոլոր շահագրգիռ կառույցների համար՝ աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության և Հյոգոյի գործողությունների ծրագրի առավել արդյունավետ իրականացման նպատակով
   2) ներկայացնել աղետների ռիսկի նվազեցման մարզային և համայնքային խնդիրները աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմում, մասնակցային եղանակով որոշելու լուծման ճանապարհները և հետամուտ լինելու դրանց իրականացմանը
   3) նպաստել և օժանդակել աղետների ռիսկի նվազեցման գործառույթների իրականացմանը մարզային ու համայնքային մակարդակներում:
5. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ. Մանուկյանին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ